Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀԻՆ

Էջմիածնի Եկեղեցական Ժողովն իր վերջին նիստում ընդունեց ներքևում հրապարակվող դիմումը՝ ուղղված քրիստոնյա աշխարհին։

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀԻՆ

Ազգային-Եկեղեցական Ժողովը՝ գումարված Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք Կաթողիկոս ընտրելու նպատակով, իր երախտագիտական զգացմունքն ու փառաբանությունն է ուղղում առ Աստված ոչ միայն իր գործի ներդաշնակ ու կատարյալ վախճանի համար, այլ որ նաև այդ գումարումը զուգադիպում է հանուր մարդկության կյանքի բարօրության և ազատության համար անսահման նշանակություն ունեցող միացյալ ազգերի փառապանծ հաղթանակին։

Քրիստոնեական կրոնն ու եկեղեցիները արտաքո կարգի դեր ունին կատարելիք. այդ եղբայրության, արդարության և ազատության գաղափարները կյանք և իրականություն դարձնելն է համայն քրիստոնեական աշխարհի և մարդկության մեջ։ Քաղաքական միտումնավոր աշխատանքները քրիստոնեական եկեղեցիների մեջ հիշյալ նպատակների իրականացման միայն խոչընդոտ կլինեն։ Նոքա նոր և ահավոր պատերազմի ուղին կհարթեն միլիոնավոր մարդկանց կորստյան, մարդկային կուլտուրական ստեղծագործության ոչնչացման պատճառ կհանդիսանան և մարդկության համար նոր տառապանքների դուռ կբանան։

Տարաբախտաբար հռոմեական եկեղեցին գլխավորող Վատիկանը մխրճվում է քաղաքական նպատակների մեջ արգելք հանդիսանալով քրիստոնեական բարձրագույն նպատակների իրագործմանը և պաշտպանելով գերմանական աշխարհավեր ուժը, որ հանուր մարդկության տառապանքների աղբյուր է հանդիսացել։ Ուստի Ազգային-Եկեղեցական Ժողովը Վատիկանի բռնած այս դիրքը, որ անհարիր է քրիստոնեական վեհ գաղափարներին, համարում է դատապարտելի։

Ազգային-Եկեղեցական Ժողովի հանձնարարությամբ՝

1. *Ամենայն Հայոց Կաթողիկոս* Գեվորգ Ջ.:
2. *Տանն Կիլիկիո Կաթողիկոս* Գարեգին Առաջին:
3. *Երուսաղեմի Պատրիարք* Կյուրեղ Բ.:
4. *Եգիպտոսի Թեմի Առաջնորդ* Մամբրե Եպիսկոպոս Սիրունյան:
5. *Իրանա-Հնդկաստանի Թեմի Առաջնորդ* Վանան Եպիսկոպոս Կոստանյան:
6. *Հյուսիսային Ամերիկայի Թեմի Առաջնորդ* Տիրան Եպիսկոպոս Ներսոյան
7. *Կալիֆորնիայի Թեմի Առաջնորդ* Մամբրե Եպիսկոպոս Գալֆայան
8. *Հունաստանի Թեմի Առաջնորդ* Կարապետ Արքեպիսկոպոս Մազլումյան:
9. *Բուլղարիո Թեմի Առաջնորդ* Գրիգոր Եպիսկոպոս Կարապետյան:
10. *Արարատյան Թեմի Առաջնորդ* Ներսես վարդապետ:
11. *Շիրակի Թեմի Առաջնորդ* Ռուբեն Եպիսկոպոս:
12. *Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդ* Ներսես Եպիսկոպոս Աբրահամյան:
13. *Բաքվի և Թուրքմենստանի Թեմի Առաջնորդ* Եզնիկ վարդապետ:
14. *Հյուսիսային Կովկասի Թեմի Առաջնորդ* Սուրեն Եպիսկոպոս
15. *Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի Թեմի Առաջնորդ* Կարապետ Եպիսկոպոս:

(«Սովետական Հայաստան», 4 հուլիսի 1945 թ., № 133 (7386)։